ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 19 (39)
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | |
|---|---|
| Թաւրիզում . . . . . | 20 ղռան |
| Գաւառներում . . . . . | 25 ղռան |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

| | |
|---|---|
| Ռուսաստան . . . . . | 5 րբ. |
| Թուրքիա . . . . . | 50 ղուռշ |
| Եւրոպա . . . . . . | 14 ֆրանք |
| Ամերիկա . . . . . . | 2,50 տոլ. |

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 20 շահի
Չորրորդ ,, ,, 10 ,,
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 ՇԱՀԻ

Խմբագրութեան հասցէ՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris Perse
Rédaction du journal arménien „MITK"
Adresse télégrafique-Tauris „MITK"

# ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامهٔ میطق

MITK
Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian

TERMS OF SUBSCRIPTION
for a year payable in advance 10 krans.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
„ „ „ „ 4-th „ 5 „
15% discount for annual subscription paid in advance. Address
Rédaction „MITK"
Tabriz, Persia

Գ. ՏԱՐԻ № 19 (39) ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 24 ՄԱՅԻՍ 1914 Թ. Tauris, amedi le 6 Juin 1914 № 1 (39) Vol. III

Требуйте и курите папиросы только
Т. Д „Бр. Сейлановыхъ"
Египетскія, Ирисъ, Прима, Паросъ, Орелъ и Марсъ.
продаются во всѣхъ магазинахъ

Русское Товарищество
АНОНИМЪ
Спирто Ректификаціонный
Коньячный заводы
и
склады ликоровъ виноградныхъ и столовыхъ винъ, спирта и натуральныхъ коньяковъ.
Урмія
Со справками обратиться въ контору
Братья Будагянъ. 3—2

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԱՆՈՆԻՄ"
ՍՊԻՐՏԻ ԵՒ ԿՈՆԵԱԿԻ
ԶՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆ
ԵՒ
ԼԻԿԵՕՐՆԵՐԻ, ԽԱՂՈՂԻ ՈՒ ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻՆԵՐԻ, ՍՊԻՐՏԻ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼ ԿՈՆԵԱԿՆԵՐԻ
ՍԿԼԱԴՆԵՐ
ՈՒՐՄԻԱ
Տեղեկութիւնների համար դիմել
ԵՂԲԱՐՔ ԲՈՒԴԱՂԵԱՆՆԵՐԻ
կանտորը
3—2

## ԱԶԳԱՅԻՆ ՄՈՒՐԱԿՈՑՏԸ

14 Մայիս Ս. Էջմիածին

—

### ՄԻ ՆՄՈՒՇ
### ԷՋՄԻԱԾՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ.

—

(Սեփ. թղթակցից)

—

Պատարագում է Ներքնեւ Մատթէոսեպիսկոպոսը. ներկայ է Ամենայն Հայոց Կաթողիկոսը. Հաղորդութեան ժամանակ է և մի ախտաւոր պառաւ կին, որ դեռ չի ճանաչում մեր «սուրբ» Հայրերին, իր զաւակին կամ թոռանը բերել է, որ հաղորդուի. Փափկասուն Ալվանեան արքեպիսկոպոսը. Էջմիածնի ժամօրհնողը, տիրացուին հրամայում է հեռացնել դուրս քշէ կնոջը թէ և տղային։

Երկար մտածելուց յետոյ մենք Նորին Սրբազնութեան վարմունքը արդարացրինք հետեւեալ երեք «սուրբ» պատճառներով:

կինը պառաւ էր,
կինը տգեղ էր,
կինը աղքատ էր...

հետեւապէս և անարժան արքայի «սուրբ» ու նրբաճաշակ հայրերի ձեռից հաղորդութիւն ստանալու...

Տարտիւֆներ... Մորակարժան փարիսեցիներ և հայոց Սիոնի պղծիչներ...

Արամայիս

## ԱՊԵՐԱԽՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

—

Մարդկային բացասական յատկութիւններից ոչ մէկը այնքան զզուելի, յուզիչ և դատապարտելի չէ, որքան ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆԸ։

Բարերարուել մէկից, վայելել մէկի խնամքը, ծանրաբեռնուած լինել մէկի միշտ յիշատակելի և օրհնաբանութեան արժանի երախտիքով և յանկարծ, օրին մէկը վեր կենալ և ոտնատակ տալ այդ բոլորը, ապտակ ածել խնամողի երեսին և թքանալ վճարել արժանի հարկը երախտաւորին, նշանակում է պարկ լինել մի բարեկրթութիւնից, ազնիւ զգացումից, նշանակում է անպատասխանատու ամբարտաւանութեամբ զըգուեցնել այս ու այն անհատին բարիք ու բարերարութիւններ անելուց։

Այդպիսի զազիր ամբարտաւանութեան պախարակելի օրինակ է ցուցադրել Թաշտի Դաշնակցական հոգաբարձութիւնը և Դաշնակցական ողջ կազմը հանդէպ այրի տիկին Ցորդանանեանի։

Հանգուցեալ Մ. Ե. Ցորդանանեանը ծախսելով տասնեակ հազարներ կառուցել է բոլոր յարմարութիւններով ճոխացուած մի փառահեղ դպրոց և նուիրել այդ Թաշտի հայ ժողովրդին։

Այդ դպրոցը 10 տարուց ի վեր գտնւում է Դաշնակցութեան ձեռքում։ Դրամ վճարող հասարակութիւնը զրկուած է դպրոցի ղեկավարներից։ Նա այօրէն է ճանաչում ինքնիրեն կամ սակաւրնտիր Թայֆայական հոգաբարձութիւնը և պահանջում է նոր ընտրութիւն արդէն կազմուած մարմնի փոխարէն։

Իր դիրքերը յաւիտեան ձեռքում պահել ուզող Թայֆայական կազմը փակում է ժողովրդի առաջ ընտրութեան վայրը։ Ժողովարդի և քահանայի բոլոր միջոցները բանալ տալու սրահը, անցնում են ապարդիւն։

Մարդիկ կարծում են, որ բնակիչները, թերևս, կամաչեն ու կքաշուեն բարերար Ցորդանանեանի այրուց։

Խնդրում են որ նա գայ և բանայ տայ իր ամուսնու յանուն ժողովրդի շինել տուած դպրոցի և նրա թատրոնի դռները ժողովրդեան առաջ։

Գալիս է բարերարուհին։ Տասնեակ հազարներ ծախսողի այրին խնդրում է ժողովրդի սեփական շէնքի դուռը բանալ նորա առաջ։

Եւ... մերժում է ապերասան*) Թայֆայական կազմը այրու խնդիրը.

Ի՜նչ բարեկրթութիւն։

Ի՜նչ ապերախտութիւն.

Կա՞յ և կարող է լինել սրանից աւելի զզուելի մի վերաբերմունք դէպի մի կին ընդհանրապէս և դէպի մի բարերարի յիշատակ մասնաւորապէս։

Այրին չէր պահանջում Թայֆայականներից ծանր գործեր, կազմափոխի հրաժարում, սկզբունքի ոտնակոխում, չէր պահանջում երկրպագութիւն նրանցից այն պատճառով, որ հանգուցեալ իր ամուսինը տեղական հայութեան համար դպրոց է շինել, ուստի իրեն ստորացնել են պարտական։

Ո՛չ։

Աչքին նման կապրիզներ։

Այրի բարերարուհին ասում էր ժողովրդի ընտրեալ համայնքներին, այս տունը ժողովրդինն է, ուստի բացէք դրա դռները նրա առաջ։

Բայց ժողովրդի «ընտրեալները» հեգնում են բարերարին, մերժում են նրան, ապտակում նրան իրենց բացա-

*) Անսանձ, առանց նոխտայի. Ծ. Խ.

